ԵՍ ԵՄ ԿԵՆԱՑ ՀԱՑԸ

ԲԱՆԱԼԻ ՀԱՄԱՐ. ՀՈՎ. 6.24-41

1 Դրանից հետո Հիսուսը գնաց Գալիլեայի՝ Տիբերիա լճի մյուս կողմը: 2 Նրա հետևից մեծ
բազմություն էր գնում, որովհետև տեսնում էին նրա հրաշքները, որ կատարում էր հիվանդների
վրա: 3 Հիսուսը լեռը բարձրացավ և իր աշակերտների հետ նստեց այնտեղ: 4 Մոտենում էր
Զատիկը՝ հրեաների տոնը: 5 Հիսուսն աչքերը վեր բարձրացրեց ու տեսավ, որ բազում ժողովուրդ
է գալիս իր մոտ: Նա Փիլիպպոսին ասաց. Որտեղի՞ց պիտի հաց գնենք, որ նրանք ուտեն: 6 Բայց
Հիսուսը սա նրան փորձելու համար ասաց, որովհետև ինքը գիտեր, թե ի՞նչ է անելու: 7 Փիլիպպոսը
նրան պատասխանեց. Նույնիսկ երկու հարյուր դինարի հացը նրանց չի բավականացնի, թեկուզ
նրանցից յուրաքանչյուրը մի կտոր վերցնի: 8 Նրա աշակերտներից մեկը՝ Անդրեասը՝ Սիմոն
Պետրոսի եղբայրը, նրան ասաց. 9 Այստեղ մի պատանի կա, որ հինգ գարեհաց ունի և երկու ձուկ,
բայց դա ի՞նչ է այսքան մարդու համար: 10 Հիսուսն էլ ասաց. Մարդկանց գետնի՛ն նստեցրեք:
Այնտեղ շատ խոտ կար: Արդ նստեցին. շուրջ հինգ հազար մարդ կար: 11 Հիսուսը հացը վերցրեց,
գոհություն հայտնեց Աստծուն ու բաշխեց նստածներին. նույն կերպ էլ ձկներից բաշխեց, որքան որ
կամեցան: 12 Երբ կշտացան, իր աշակերտներին ասաց. Ավելացած կտորները հավաքե՛ք,
որպեսզի ոչինչ չկորչի: 13 Հավաքեցին և ուտողներից ավելացած այն հինգ գարեհացի կտորներից
տասներկու կողով լցրեցին: 14 Երբ մարդիկ տեսան այդ հրաշքը, որ Հիսուսը գործեց, ասացին.
Ճշմարտապես սա է այն մարգարեն, որ աշխարհ էր գալու: 15 Սակայն քանի որ Հիսուսը գիտեր, որ
գալու են իրեն բռնելու, որպեսզի թագավոր դարձնեն, դարձյալ միայնակ լեռը գնաց:

24 Արդ երբ ժողովուրդը տեսավ, որ ո՛չ Հիսուսն է այնտեղ, ո՛չ էլ նրա աշակերտները, իրենք էլ
նավեր նստեցին և եկան Կափառնաում՝ Հիսուսին փնտրելու: 25 Եվ երբ նրան գտան լճի մյուս
կողմում, ասացին. Ռաբբի, ե՞րբ այստեղ եկար: 26 Հիսուսը նրանց պատասխանեց. Ճշմարիտ,
ճշմարիտ եմ ասում ձեզ. դուք ինձ փնտրում եք ոչ թե նրա համար, որ հրաշքներ տեսաք, այլ
որովհետև այն հացից կերաք ու կշտացաք: Նրանք ասացին Հիսուսին. Տե՛ր, ամեն ժամ տո՛ւր մեզ
այդ հացը:

35 Հիսուսը նրանց ասաց. Ես եմ կյանքի հացը. դեպի ինձ եկողը չի քաղցի, և ինձ հավատացողը
երբեք չի ծարավի:

1. *Ես եմ կյանքի հացը (6.35; տե՛ս Հով. 35, 41, 48, 51)*
2. *Ես եմ աշխարհի լույսը (8.12; տե՛ս Հով.. 18, 23)*
3. *Ես եմ ոչխարների դուռը (տե՛ս Հով. 10.7, 9)*
4. *Ես եմ բարի հովիվը (տե՛ս Հով. 10.11, 14)*
5. *Ես եմ հարությունը և կյանքը (տե՛ս Հով. 11.25)*
6. *Ես եմ ճանապարհը, ճշմարտությունը և կյանքը (տե՛ս Հով. 14.6)*
7. *Ես եմ ճշմարիտ որթատունկը (տե՛ս Հով. 15.1, 5)*

- ***Այս հրաշքի նույն պատմությունը նշված է նաև Մարկոս 6.30-44, Ղուկաս 9.10-17 և Հովհաննես 6.1-14 հատվածներում:***

I. ՀԻՍՈՒՍԸ ԿԵՆԱՑ ՀԱՑՆ Է:

Ես եմ երկնքից իջած հացը:

31 Մեր հայրերն անապատում մանանան կերան, ինչպես որ գրված է. "Երկնքից նրանց ուտելու հաց տվեց" (Սաղ. 78.24): 32 Հիսուսը նրանց ասաց. Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ. երկնքից այն հացը ձեզ Մովսեսը չի տվել, այլ իմ Հայրն է ձեզ ճշմարիտ հացը տալիս երկնքից, 33 որովհետև Աստծու հացն այն է, որ երկնքից է իջնում և կյանք է տալիս աշխարհինե: 34 Նրանք ասացին Հիսուսին. Տե՛ր, ամեն ժամ տո՛ւր մեզ այդ հացը: 35 Հիսուսը նրանց ասաց. Ես եմ կյանքի հացը. դեպի ինձ եկողը չի քաղցի, և ինձ հավատացողը երբեք չի ծարավի:

41 Այդժամ հրեաները վրդովվում էին, որ ասաց. Ես եմ երկնքից իջած հացը:

Մատթեոս 6.11 – Տո՛ւր մեզ այսօր մեր հանապազօրյա հացը:

- ***Արդյո՞ք Աստված այսօր էլ է այս հրաշքը կատարում: Երբևէ տեսե՞լ եք այս հրաշքը ձեր կյանքում:***

*Մարկոս 6.39-41 – 39 Այդ ժամանակ նրանց կարգադրեց, որ բոլորին խումբ-խումբ նստեցնեն դալար խոտի վրա: 40 Եվ նրանք **դաս-դաս նստեցին՝ հարյուր-հարյուր և հիսուն-հիսուն:** 41 Հիսուսը վերցրեց հինգ հացն ու երկու ձուկը, դեպի երկինք նայեց, դրանք օրհնեց, հացերը մասերի բաժանեց ու աշակերտներին տվեց, որ նրանց բաժանեն: Այն երկու ձկները նույնպես բոլորին բաժանեց: 42 Բոլորն էլ կերան ու կշտացան:*

II. ԿԵՆԱՑ ՀԱՑԸ ԿՇՏԱՑՆՈՒՄ Է ՄԵՐ ՀՈԳԻՆ:

- ***Այն այսօր մեր ձեռքերում է:***

Ղուկաս 22.19-20 – 19 Եվ հացը վերցնելով՝ գոհություն հայտնեց, կտրեց ու նրանց տվեց և ասաց. Այս է իմ մարմինը, որ ձեզ համար է տրվում. այս արե՛ք ի հիշատակ ինձե: 20 Նույն կերպ էլ ընթրիքից հետո բաժակը վերցրեց ու ասաց. ,Այս բաժակը նոր ուխտն է իմ արյունով, որ ձեզ համար է թափվում:

Ա Կոր. 10.17 – Մենք շատերս մեկ հաց, մեկ մարմին ենք, քանի որ ամենքս այն մեկ հացից ենք հաղորդվում:

III. ԱՅՍ ԿԵՆԱՑ ՀԱՑԸ ՊԵՏՔ Է ՈՒՏԵԼ: ՀԻՍՈՒՍԸ ԲԱՑԱՏՐՈՒՄ Է.

Հով. 6.47-51 – 47 Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ. ինձ հավատացողը հավիտենական կյանք ունի: 48 Ես եմ կյանքի հացը: 49 Ձեր հայրերն անապատում կերան մանանան, բայց մեռան: 50 Սակայն ով ուտի այն հացից, որ երկնքից է իջել, չի մեռնի: 51 Ես եմ կենդանի հացը, որ երկնքից է իջել: Եթե մեկն այս հացից ուտի, հավիտյան կապրի, և այն հացը, որ ես կտամ, իմ մարմինն է, որ ես տալու եմ աշխարհի կյանքի համար:

- ***Եկեք միասին մասնակից լինենք Սուրբ Հաղորդությանը:***

ԻՆՉ Է ԱՍՈՒՄ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՔԵԶ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ